«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Արժեքային համակարգի ձևավորումն առակների ուսուցման միջոցով
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Լուսինե Այվազյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ն. Խաչատրյանի անվան հ. 113 միջն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ 1. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առակների ուսուցման ընթացքում----------6

Գլուխ 2. Ժամանակակից մանկավարժության մարտահրավերները----------8

Գլուխ 3. Ինչպես ձևավորել արժեքային համակարգ ուսումնական գործընթացում----------10

Եզրակացություն----------16

Գրականության ցանկ----------17

Ներածություն

Յուրաքանչյուր սերնդի արժեհամակարգ ձևավորվում է նոր պահանջմունքերի, նոր մեթոդների հիման վրա։ Դա պարտադրվում է հենց այդ սերնդի կողմից։ Մանկավարժական և փիլիսոփայական եզրույթների բացատրությունները՝ կապված արժեք, արժեհամակարգ, բարոյականություն և նման բովանդակություն ունեցող բառերի հետ, մնում են անփոփոխ։ Սակայն դրանց հասնելու և դրանք ձևավորելու համար յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կարողանա շարժվել հենց այդ ժամանակի թելադրանքով՝ ժամանակի ու սերդնի փոփոխությունից ոչ թե դժգոհելով, այլ այն դարձնելով մեթոդական զենք

Որտե՞ղ, ինչպե՞ս և ո՞վ է ձևավորում ՀՀ քաղաքացու արժեհամակարգը։ Դժվար է ՀՀ-ի ապագան պատկերացնել առանց կայուն արժեհամակարգ ունեցող, համակեցության կանոնները պահպանող, էթիկական դաստիարակություն ստացած քաղաքացու։ Հաշվի առնելով մեր պետության աշխարհագրական դիրքը, տարածաշրջանային մարտահրավերները, մեր երկրի համար ազգապահպանման տեսակետից առավել կարևոր են դառնում բուն ազգային արժեքների պահպանումն ու փոխանցումը։

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում։

Արժեքների փոխանցումը կատարվում է բարոյագիտության միջոցով։ Բարոյագիտությունը հետազոտում է մարդկային բարոյականության հետ կապված խնդիրները՝ բարու և չարի, ճշտի և սխալի, առաքինության և արատի, արդարության և հանցանքի խնդիրները։ Այս արժեքների վերաբերյալ պատկերացումների ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ, շարունակում ձևավորվել նրա ողջ կյանքի ընթացքում։ Դրան մասնակցում են առաջին հերթին ընտանիքը, միջավայրը, տեղեկատվական տեխնոլոգիաները և երեխաների դաստիարակության ամենակարևոր ու հիմնական օղակը՝ դպրոցը։ Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ հանրակրթության պետական չափորոշչում՝ որպես կրթության

բովանդակային բաղադրիչ։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կերպով նաև նշվում են արժեքները, հենց բարոյական արժեքները, որոնք պետք է տա դպրոցը՝ ըստ ուսումնական բնագավառների ու կրթական աստիճանների։ Այսինքն, առանձին նշված են տարրական, միջին ու ավագ դպրոցի շրջանավարտների համար արժեքներ, որոնց հանրագումարն էլ կձևավորի մեր պատկերացրած ապագա քաղաքացուն։

Ի՞նչ է առակը

Առակը խոսքի արտահայտման այնպիսի ձև է, որն ասելիքը բացատրում և ներկայացնում է առանձին, մի օրինակի միջոցով կատարված ընդհանրացմամբ։ Այսինքն՝մի պատմություն և զրույց է, որից կատարվում է համապատասխան բարոյական եզրահանգում։ Առակը փոխաբերական իմաստ ունեցող պատմություն է, որը նպատակ ունի անուղղակի կերպով բացահայտելու որևէ ճշմարտություն։ Առակներն ացդեցության մեծ ուժ ունեն,քանի որ նյութական ձևի վերածված պատկերը մտքի վրա ավելի մեծ տպավորություն է գործում,քան վերացական գաղափարը։ Առակներն ունկնդիրներին ստիպում և պարտադրում են հետաքրքրվել, մտածել, ինքնուրույն եզրակացություններ անել։ «Առակ» բառը հին հայերենում նշանկել է խրատ, իմաստություն, այլաբանություն, բարոյախրատական նշանակություն ունեցող փոքրիկ զրույց։ Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակ է, որ վերոհիշյալ գրեթե բոլոր հատկանիշներն ունի իր մեջ ներառած։ Առակները գեղարվեստական փոքրիկ ստեղծագործություններ են կենդանիների, բույսերի, ինչպես նաև մարդկանց մասին պատմող զանազան հետաքրքրաշարժ զրույցներ, որոնք ունեն այլաբանական իմաստ։ Նրանցում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց։ Առակներում գովաբանվում և խրախուսվում է լավը, բարին, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում է վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը։ Ամեն մի առակ ունի խրատական դաստիարակիչ իմաստ։ Առակները հին ժամանակներից ի վեր սիրված ու թարգմանաբար տարածված են եղել աշխարհի շատ ժողովուրդների բանահյուսության և գրականության մեջ։ Առակների ամենահին հեղինակը հույն Եզովպոսն է, որի անունով բազմաթիվ առակներ։Հայ գրականության մեջ առակները երևան են եկել վաղ միջնադարում,սկզբում հունական

առակների թարգմանություններով, որոնք ամփոփված են եղել «Բարվափոս» և «Ոլիմպիանի առակները» ժողովածուներում, հետագայում՝12-13-րդ դարերում , առակներ են գրել նաև հայ հեղինակները, որոնցից նշանավոր են Մխիթար Գոշը,Վարդան Այգեկցին:Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ,ամենահայտնին՝ «Աղվեսագիրքն» է:

Թեմայի արդիականությունը: Կրթական բարեփոխումների շրջափուլում պատերազմական իրավիճակում հայտնված պետության համար խիստ կարևոր է դպրոցի դերը՝ որպես բարձր արժեհամակարգով քաղաքացի ձևավորող կառույց:

Մեր դպրոցի նպատակը պետք է լինի կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար հիմա անհրաժեշտ է երեխայի մեջ ձևավորել և զարգացնել իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքներ՝ օրինակներ բերելով հայտնի առակներից:

Աշխատանքի նպատակները.

- ուսումնասիրել և ներկայացնել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առակների ուսուցման օրինակով:
- կիրառել մեթոդական հնարներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար:
- գտնել լավագույն լուծումները նպատակին հասնելու համար:

Աշխատանքի խնդիրները

Նպատակներին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին:
- Ներկայացվող նյութը արդունավետ օգտագործել՝ աշակերտի մեջ ձևավորելով արժեհամակարգին բնորոշ հատկանիշները:
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:
- Օգտագործել ճիշտ ընտրված ուսումնական մեթոդներ՝ դասի դաստիարակչական մասը ապահովելու համար:

Գլուխ 1. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առակների ուսուցման ընթացքում

«Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել ՄԱՐԴ կոչման հետ»:

Հովհաննես Թումանյան

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ ժամանակակից աշխարհն իր խենթ վայրիվերումներով նոր պահանջներ է դնում կրթության, մասնավորապես դպրոցի առաջ: Ըստ պետական չափորոշչի՝ ուսուցչի տված գիտելիքը պիտի հնարավորինս գործնական ու կիրառելի լինի, ապահովի.

- ✓ Գրագետ, մատչելի խոսք
- ✓ Սովորել սովորելու կարողություն
- ✓ Թվային և մեդիա գրագիտություն

- ✓ Մաթեմատիկական կարողունակություն
- ✓ Մշակութային կարողունակություն
- ✓ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- ✓ Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- ✓ Տնտեսական կարողունակություններ

Այսօր միայն գեղեցիկ և գրագետ խոսքը բավարար չէ, որ աշակերտը կյանք մտնի պատրաստված, անհրաժեշտ է, որ մեր սովորողն ունենա նաև որոշակի հմտություններ, մարդկանց հետ շփվելու, աշխատելու կարողություն, իսկ դրա համար գիտելիքից զատ անհրաժեշտ է, որ ապագա բժիշկը, ոստիկանը, ուսուցիչը, խոհարարը, դատավորը կամ բանվորը տիրապետի մարդկային շփման տարրական նորմերին, ունենա այնպիսի արժեհամակարգ, որ իր մարդկային որակով համախմբի իր շուրջը մյուսներին, կարողանա լավ օրինակ լինել։

5-րդ դասարանում մայրենիի շրջանակներում առավել նախընտրելի են նկարազարդ, դերային առակները։ Երեխաները մեծ սիրով ընդօրինակում են հերոսներին, հաճախ նաև հանդես են գալիս ինքնուրույն փոքրիկ բովանդակային շեղումներով՝ ապահովելով աշխույժ կենդանի համագործակցությունը։ Երբ առակները նկարազարդված չեն, առաջարկում եմ ինքնուրույն նկարազարդել, նկարի միջոցով պատկերել տեսածը, զգացածը։ Դերային խաղի ժամանակ երեխայի մոտ զարգանում է ինքնաճանաչողությունը, սովորել սովորելու կարողունակությունը, մշակութային՝ միմյանց հետ շփվելու, լսելու կարողունակությունը, համագործակցելու հմտությունը։ Աշակերտներին առաջարկվում է հիմնական սկզբունքներից ելնելով նոր առակ հորինել, խրախուսվում են այն երեխաները, ովքեր կարողացել են արդի խնդիրներին լավ լուծումներ տալ՝ օգտագործելով դերասանական խաղը և առակի բովանդակությունը կապել մեր օրերին։

Գլուխ 2. Ժամանակակից մանկավարժության մարտահրավերները

Մեր օրերում ժամանակակից մանկավարժությունն իր առջև խնդիր ունի սովորողների մոտ ձևավորել ազգային գիտակցություն, որի հիմքում պետք է լինի սեփական ժողովրդի պատմությունն ու մշակույթը՝ չմոռանալով համամարդկային արժեքները։

Դաստիարակչական խնդիրները լուծելիս պետք է անպայման հաշվի առնվեն տարբեր ազգերի ժողովուրդների լեզվի, մշակույթի հանդեպ հարգալից վերաբերմունքի ձևավորումը՝ միևնույն ժամանակ արժևորելով մերը։ Օտար մշակույթը, լեզուն չպետք է գերագնահատվեն, ստվեր չպիտի գցեն մեր ազգային մշակույթի վրա։

Բարձր դասարաններում երբեմն սովորողները տարվում են օտար տոներով, սովորություններով։ Ուսուցչի դերն այստեղ շատ կարևոր է, նա պիտի նրբորեն ուղղորդի։

Ուսուցչի անձնական օրինակը շատ կարևոր է.

«Քո ուսուցիչը նա չէ, ով քեզ սովորեցնում է, այլ նա, ումից դու ինքդ ես սովորում»։

Ռիչարդ Բախ

Արժեքային համակարգի ձևավորման փուլերն ըստ Մ. Մեսսեյի

I. Դրոշմի փուլ-մինչև 7 տարեկաններ-երեխաները նման են սպունգի

II. Կրկնօրինակման փուլ-8-ից 13 տարեկաններ-կրկնօրինակում են ծնողներին, ուսուցիչներին, դասարանցիներին

III. Սոցիալականացման փուլ-13-ից 21 տարեկաններ-կարևոր է հասակակիցների կարծիքը, հուզական ազդեցություն։

Դժվար է ընդհանրացնել և կազմել համընդհանուր մարդկային արժեքների ցանկը, որովհետև առանձին ազգի համար արժեքն իր մշակույթն ու լեզուն է, ողջ մարդկության համար՝ գեղեցկությունն ու սերը, ըստ որոշ փիլիսոփաների՝ մարդկային համընդհանուր արժեքներ ընդհանրապես գոյություն չունեն։

Ցավոք, այսօր մարդկության մի ստվար զանգվածի համար ամենամեծ արժեքը նյութականն է՝ լավ հեռախոս, շքեղ առանձնատուն, թանկ մեքենա, իդեալական հարմարություններ, ու հնարավորինս շատ փող, իհարկե այս ամենն անհրաժեշտ է, բայց փողը չպիտի կյանքի նպատակ դառնա։

Դպրոցը, ուսուցիչը պիտի առավելագույն ջանքեր գործադրի, որ հարստացնի երեխայի հոգին, որովհետև հոգևոր բարձր արժանիքներով սնված երեխան փողի թակարդը հեշտությամբ չի ընկնի և հանուն փողի որևէ ստոր, նվաստ արարքի չի դիմի։

Մենք պիտի մեր բոլոր ջանքերը ներդնենք, որ երեխայի մոտ զարգանան

հոգևոր	և	մնայուն	արժեքներ
ազատություն		հուշարձան	
հարգանք		եկեղեցի	
սեր		պատմամշակութային կոթող	
բարոյականություն			
կյանք			

Գլուխ 3.Ինչպես ձևավորել արժեքային համակարգ ուսումնական գործընթացում

Իսկ ինչպիսի՞ արժեքային համակարգ ենք ուզում ունենալ հանրակրթական դպրոցում: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց կրթության միջոցով ու կրթության ֆոնի վրա: Կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է: Կարծում ենք, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Մանկավարժը, ուսուցիչը պետք է սեփական օրինակով դաստիարակեն սանին, օրինակ ծառայեն, քանի որ օրինակի ուժը զորեղ է:

Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Արժեքային համակարգի չափանիշները սահմանում են, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է

- լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,
- ունենա ազգային ինքնագիտակցություն,
- գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- գնահատի իր ժողովրդի արժեքներն ու ավանդույթները:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները, և ոչ թե նրանց մի մասը: Իսկ դա ինքնաբերաբար լինել չի կարող, և անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրադրություն և ապահովի անհրաժեշտ պայմաններ: Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական շարժառիթներ և բարենպաստ դրդապատճառներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը:

Առակի դերային խաղն ավելի համոզիչ դարձնելու համար անհրաժեշտ է նաև զարգացած բանավոր արտահայտիչ խոսքը։ Առակները կարևորվել են ոչ միայն մեր երկրում։ Օրինակ՝ դեռևս Հին Հնդկաստանում որպես դասագիրք գործածվել է «Քալիլա և Դիմնա» առակների ժողովածուն, այն համարվել է իմաստության գանձարան, կիրառվել է թագաժառանգների կրթության համար։

Երբ սովորողներն ուսումնասիրում են նաև այլ ժողովուրդների առակները, հաղորդակից են լինում այլ մշակույթներին, սակայն միևնույն ժամանակ արժևորում են սեփական ազգային մշակույթը։ Սովորաբար մեծ խանդավառությամբ ծանոթանում են Եզոպոսի առակներին, հատկապես գրեթե բոլորի մոտ շուտ տպավորվում է Լեզվի մասին առակը, թեև դասագրքում այդ առակը ներառված չէ, բայց ես՝ որպես արտադասարանական ընթերցանություն, հանձնարարում եմ այս առակը, որովհետև այս առակի միջոցով միաժամանակ հնարավոր է դառնում մի քանի հմտություն ապահովել, նաև գրագիտություն. հենվելով լավ կառուցված խոսքի վրա հնարավոր է դառնում հասանելի դարձնել այն կարևոր միտքը, որ լեզուն այս աշխարհում ամենալավ ու ամենավատ բանն է, նայած,թե ում է ծառայում, երեխաները սովորում են հարգել մեկը մյուսի կարծիքը, խոսքերին շատ զգուշորեն վերաբերվել։

Առհասարակ առակների ուսուցմամբ երեխայի մոտ ձևավորվում են առանցքային կարողունակություններ՝ ինքնաճանաչողական-յուրաքանչյուր առակի մեջ էլ կարելի է տեսնել ինքդ քեզ կամ շրջապատիցդ մեկին, սոցիալական-շատ հաճախ դերային խաղի ժամանակ պետք է հարմարվել մեկը մյուսին, իրար հետ համագործակցել, ժողովրդավարական-կարևորել ժողովրդավարությունը, երբ պաշտոններ զբաղեցնողը չի հետևում որոշակի կանոնների, ապա կարող է քարկոծվել իր ստորադասների կողմից, ինչպես այն առակում, երբ առյուծը նախատում է ձկներին, որ իրենցից մանրերին չուտեն, վերջիններս պատասխան են տալիս, որ առյուծից այլ բան չեն սովորել։

Յուրաքանչյուր առակի ուսումնասիրությունից հետո երեխաները սկսում են վերլուծել նաև իրենց վարքը, բարձրաձայնում դատողությունները, արտահայտում իրենց դիրքորոշումն այս կամ այն հերոսի պահվածքի շուրջ։

Առակների բովանդակությունը սերտորեն կապված է մեր առօրյայի հետ, այն արտացոլում է մեր շուրջը եղած թե՛ բացթողումները, թե՛ պախարակելի կողմերը։

Ահա Վարդան Այգեկցու «Առյուծ և մարդ» առակն անցնելիս անպայման շեշտը դնում եմ մարդու խելքի, մտքի ուժի վրա։ Երեխաները սիրով են տանում մարդու դերը, որովհետև նա կարողանում է հնազանդեցնել ու հաղթել նույնիսկ հզոր առյուծին։ Այս դասի ընթացքում երեխաներն արժևորում են խելքը, հնարամտությունը, որի շնորհիվ գլխավոր հերոսն իր կյանքը կարողանում է փրկել։

«Գայլերն ու ոչխարները» առակում ոչխարներն իրենց հիմարության պատճառով զրկվում են շների օգնությունից, որովհետև գայլերը նրանց խորհուրդ էին տվել ազատվել շներից, իբր թե այդ նրանք են խանգարում, որ գայլերը ոչխարների հետ բարեկամություն անեն։ Աշակերտների համար պարզ է, որ թշնամին ոչ մի դեպքում բարեկամ չի դառնա և հիմարություն է օգնող, աջակցողից հրաժարվել։ Այս առակի ուսուցման ժամանակ երեխաներն անմիջապես ուղիղ կապ են տեսնում մեր օրերի իրադարձությունների հետ և արտահայտում իրենց դիրքորոշումը, որ պետք չէ տրվել բարեկամության կեղծ խոստումներին։

Ավետիք Իսահակյանի «Կյանքից թանկ բանը» առակն ուսուցանելիս նախապես հանձնարարում եմ հինգրոպեանոց շարադրանք.երեխաները պիտի ներկայացնեն, թե ինչն է իրենց համար ամենաթանկը։ Առավել կրկնվող բառերը գրի կառնեն գրատախտակին։ Արդյունքում, մոտավորապես պարզ կդառնա, թե երեխաների մեծամասնությունն իրենց կյանքում ինչն են ամենից շատ կարևորում։ Այս ամենից հետո կարելի է ամբողջացնել և լսել նաև ավելի պասիվ երեխաների կարծիքը ևս, որից հետո լավագույն աշակերտներից մեկն առոգանությամբ կընթերցի առակը։ Բովանդակությանը ծանոթանալուց հետո գրատախտակին կգրվեն առակի ամենակարևոր բանալի 3 բառերը, որոնց օգնությամբ հնարավոր կլինի բացել կողպեքը՝ այս առակի ամենակարևոր պատգամը՝ <u>ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ</u> նույնիսկ կյանքի գնով։

Երեխաները պիտի գիտակցեն, որ առանց ազատության, առանց թևերի, թռչունի կյանքն իմաստը կորցնում է ճիշտ այնպես, ինչպես մարդը։

Մարդկությունը դարեր շարունակ պայքարել է ազատության համար։ Մեր ժողովուրդն էլ անմասն չի մնացել այդ պայքարից։ Ազատության համար մեր քաջորդիները շատ հաճախ իրենց կյանքով են հատուցել, ուրեմն մեր աշակերտները պիտի գիտակցեն ազատության իրական գինն ու արժևորեն այն։

Հասարակության, կյանքի, մեկ այլ արատի մասին է Հովհաննես Շիրազի «Մարգարիտն ու փրփուրը»։ Այս առակն ուսուցանելիս երեխաները շատ արագ գտնում են և՛ մարգարիտի, և՛

փրփուրի նմաններին իրենց իսկ շրջապատում։ Թեման շատ արդիական է, հանճարեղ բանաստեղծը կարողացել է ցույց տալ, որ այսօր մեր կյանքում հաճախ ծափահարությունների, փառքի պսակների արժանանում են ցավոք անարժանները, իսկ իրական արժանավորները հաճախ անտեսված ու աննկատ են մնում, բայց ի տարբերություն առակի, որտեղ փրփուրն առաջին իսկ քամուց հօդս է ցնդում, անհետանում, իրական կյանքում երբեմն ավելի երկար են վայելում փառքը, բայց երեխաները պիտի վստահ լինեն, որ արժանիք ունեցող մարդն անպայման իր տեղը կգտնի։

Առակների, առհասարակ ցանկացած գիտելիքի ուսուցումը պետք է չձանձրացնի երեխային, ինչպես մեծ մանկավարժ Սուխոմլինսկին է սովորեցնում, երեխան դպրոցական լինելուց առաջ մարդ է, որն ունի սեփական հետաքրքրությունը, պահանջմունքներն ու ձգտումները։



Ի վերջո, առակների ուսումնասիրությունը երեխաների մոտ պիտի ձևավորի դիրքորոշում՝ ի՞նչ դրական բան սովորեց, ի՞նչը երբեք չի անի, ի՞նչ կարող է փոխել, որ հնարավորինս խուսափի չար ու վատ մարդկանցից։

Համացանցի այս դարում երեխաները կարող են փոքրիկ տեսանյութեր կամ սլայդներ պատրաստել կամ ներբեռնել,որի օգնությամբ կկարողանան ներկայացնել որևէ լրացուցիչ տեղեկություն առակագիրների մասին։

Գեղեցիկ նկարող երեխաները նյութն ամփոփելու համար կարող են միավորվել և օրինակ՝ պատի պաստառ կամ թերթ պատրաստել,որտեղ կպատկերեն իրենց առավել դուր եկած առակներից դրվագներ կամ հերոսներ…

Առակների թեման ամբողջացնելու համար նախընտրում եմ «Կենտրոնների տեղափոխման» մեթոդը, որի ժամանակ շրջված դասարանի մեթոդով հանձնարարում եմ մի քանի աշակերտների, որ լավ ուսումնասիրեն աստվածաշնչյան առակները, որպեսզի առաջին խմբում բացատրեն նոր նյութը, երկրորդում լսեն, երրորդում ինքնուրույն աշխատանքը հսկեն իմ անմիջական ուղղորդմամբ։

Այս աշխատանքի արդյունքում ակնկալվում է արժևորել սեփական իրավունքը գիտակցող մարդ-քաղաքացուն։ Երեխաները կկարողանան հանդուրժել միմյանց թերությունները, համագործակցել և միասին գտնել լուծումներ, կզարգանա պատասխանատվության, արժանապատվության, պատվի զգացումը, համատեղ աշխատանքի ժամանակ կսովորեն հաշվի առնել դիմացինին, լսել կարծիքը, գեղեցիկ, պատկերավոր ներկայացնել թիմային աշխատանքը։

Հետևողական, երկարատև աշխատանքի արդյունքում կարելի է ակնկալել, որ ճիշտ արժեհամակարգով մարդ-քաղաքացի է մեծանում, մեր երկրի վաղվա ամուր հիմքն ու հուսալի ապագա սերունդը։

Եզրակացություններ

- Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առակների միջոցով առաջնահերթություն է ներկայիս սերունդների համար։
- Համեմատելով մեր օրերի հետ, ցույց տալով թեմայի արդիականությունը՝ բարձրանում է սովորողների սովորելու մոտիվացիան և ուսուցման արդյունավետությունը։
- Նյութի յուրացմանը նպաստում են միջառարկայական կապերը, որոնք օգնում են թեմայի ամբողջական ու խորքային յուրացմանը։
- Բարձր արժեհամակարգ ձևավորելու համար արդյունավետ եղանակներից է առակների ուսուցումը։
- Դասն իր նպատակին հասցնելու կարևոր բաղադրիչը այս պարագայում աշակերտակենտրոն ուսուցումն է, ինչը հնարավորություն է տալիս սովորողներին վերլուծել, մեկնաբանել, համապատասխան եզրահանգումների գալ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան, Հասարակագիտություն 8-րդ դասարան, Երևան, 2013։
2. Ս. Պետրոսյան,Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան, Կ. վարդանյան, Կ. Աղաջանյան, Հասարակագիտություն 10-րդ դասարան, Երևան, 2009։
3. Ս. Սարինյան, Մուրացան, Երևան, 1976։
4. Ն. Տողանյան, Հ. Խաչատրյան, Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2008։
5. Նաիրա Տողանյան, Հեղինե Խաչատրյան_Գրականություն (մեթոդական ձեռնարկ) Հղումներ՝

6. https://old-lib.armedu.am/resource/4368

7.https://hy.m.wikipedia.org/wiki/%D5%94%D5%A1%D5%AC%D5%AB%D5%AC%D5%A1_%D6%87_%D4%B4%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1